Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14381

347
4-21

1873

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿՏԱԿԱՑ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ,

Ի ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԱՒՒՆ ԺՈՂՈՎՈՅ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

ԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՌՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ՊԱՐՈՆԵԱՆ

Printed in Turk

347
4.21

1632

2 010

10

2001

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿՏԱԿԱՑ

347
4-21

ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԿՏԱԿԱՑ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ
Ի ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՑ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Printed in Turkey

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՑ ԳԱՎԱՖԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ՊԱՐՈՆԵԱՆ

— 1873 —

2314/

2679
39

ԱԶԴ

Կեդրոնական Վարչութեան Կրօնական և Քաղաքական խառն Ժողովը՝ Կոտակաց Հոգաբարձութեան և Տնտեսական Խորհրդոյ կարծիքն առնելէ ետքը՝ պատրաստեց և վաւերացուց սոյն Կոտակաց Կանոնագիրը, և տպագրութեամբ կը հրատարակէ, հրաւիրելով մայրաքաղաքիս Թաղական Խորհուրդները և Գաւառական Վարչութիւնները, որ ըստ այսմ կոտակաց գործադրութիւնն ընելով, փորձառութեամբ ունեցած դիտողութիւնին բարեհաճին տեղեկագրել առ Կոտակաց Հոգաբարձութիւն Կեդրոնական Վարչութեան. որպէս զի սոյն Կանոնագիրը վերաքննուելով մատուցուի Ազգային Ընդհանուր Ժողովոյ Ի վաւերացումն։

24 Մայիս 1873
Ի Պատրիարքարանի Հայոց
Ի Կ. Պոլիս

ՆԱԽԱԳԱՀ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՅ
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆ

Դիւրաւի կրօնական Ժողովոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ	ԱՏԵՆԱՊԵՏ
Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ	ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Դիւրաւի քաղաքական Ժողովոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ	ԱՏԵՆԱՊԵՏ
Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ	ՍԵՆԵՔԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Կ Տ Ա Կ Ա Ց

1. Կտակարար անձը պէտք է որ իր կտակագիրն ըստորագրէ. և խոստովանահայր քահանային և քարոզչին կամ աւագերէցին և երկու աշխարհականաց վկայութեամբն ալ թէ՛ իր ստորագրութիւնը և թէ՛ կտակագրին պարունակութիւնը հաստատելոյ. և ապա կտակագիրը կը ներկայացուի Ազգային Վարչութեան 'ի վաւերացումն։

2. Կեդրոնական Վարչութիւնը կը քննէ կտակագիրը մը, եթէ կտակարարը Կ. Պոլսոյ մէջ կը բնակի. և Ս. Պատրիարքն ալ նոյն կտակագիրը կը վաւերացնէ։

3. Այն վաւերացեալ կտակագիրը գոնէ երեք օրինակ պիտի ըլլայ. մէկը կտակարարին պիտի յանձնուի, որ պիտի կարդացուի անոր բնակած տեղւոյն եկեղեցւոյն մէջ. մէկը կտակընկալ ազգային հաստատութեան (եկեղեցւոյ, վանուց, վարժարանի, հիւանդանոցի, աղքա-

տաց, որբոց, քահանայից, դպրաց և ազգօգուտ ընկերութեան ևն), որ եթէ ուրիշ Թաղի մէջ է, անոր եկեղեցւոյն մէջ ալ պիտի կարդացուի. և մէկն ալ Կեդր. Վարչութեան Դիւանատունը պիտի պահուի, և օրինակն ալ լրագրաց միջոցաւ պիտի հրատարակուի։

Կտակագրին ընթերցումը և հրատարակութիւնը այն ատեն չըլլար, երբ կտակարարը չի կամիր։

4. Երբ կտակարարը գաւառի մէջ կը բնակի, կտակագիրը նոյն գաւառի Ազգային Վարչութենէն կը քընուի. և նոյն գաւառի Առաջնորդը կը վաւերացնէ զայն. և մէկ օրինակն ալ Կեդր. Վարչութեան Դիւանատունը կը ղրկուի, և անկէ ալ հրատարակութեան կը տրուի։

5. Եթէ կտակարար մը իր կտակագիրը միայն իր ըստորագրութեամբը հաստատած է, և քահանայի կամ այլոց աշխարհականաց վկայութեամբ Ազգային Վարչութեան վաւերացնել տալու ժամանակ չէ ունեցած կամ չէ կրցած՝ և վախճանած է. երբ կտակագրին ստորագրութիւնը բուն տիրոջն ըլլալը վկայուի և հաստատուի, Ազգային Վարչութիւնը զայն կտակագիրը կը վաւերացընէ, և ըստ այնմ գործադրել կուտայ։

6. Եթէ կտակարար մը բնաւ ժամանակ չէ ունեցեր կամ չէ կրցեր իր կտակագիրը շինել և ստորագրել, այլ միայն եկեղեցական կամ աշխարհական արժանահաւատ անձանց ներկայութեան իր վերջին կամքը յայտներ է. այն ատեն նոյն անձանց (որք շահ կամ մաս մ'ունենալու չեն կտակէն) վկայութեանը համեմատ կտակագիր կը պատրաստուի, և վկայից ստորագրութեամբը հաստատելէն ետքը՝ Ազգային Վարչութիւնն ալ զայն կը վաւերացնէ. և ըստ այնմ գործադրել կուտայ։

7. Կտակարարը կտակեալ դրամ և այլ շարժական ըստացուածք կտակընկալ հաստատութեան կրնայ յանձնել ի կենդանութեան իւրում. և կամ յետ մահուան իւրոյ յանձնել կ'որոշէ. բայց այն ատեն կտակարարին կինն ու ժառանգորդք իրենց ստորագրութեամբը պիտի հաստատեն կտակագիրը. կամ թէպէտ ասոնք դժկամակին, ուրիշ ապահովութեան օրինական միջոց պէտք է որ գործածէ թէ՝ կտակարարը և թէ՝ Ազգային Վարչութիւնը։

8. Կտակեալ տուն և այլ անշարժ ստացուածք կտակարարն 'ի կենդանութեան իւրում պարտի ուղղակի կտակընկալ հաստատութեան անունը դարձնել. կամ անոր անունը վրայ ըլլալն ապահովցնել ըստ օրինի. որուն փոխարէն ինք ալ Պատրիարքական կամ Առաջնորդական կնքովք վաւերացեալ կտակագրին մէկ օրինակը կ'ըստանայ յապահովութիւն։

9. Մէկը կրնայ դրամ յանձնել ազգային հաստատութեան մը, և անոր տոկոսի արդիւնքը ստանալ ցվախճան իւր՝ նոյն հաստատութենէն. յետ մահուան նոյն դրամին տոկոսը ամբողջ կամ կէսը նոյն հաստատութեան մնալու պայմանաւ. և եթէ միւս կէսը ուրիշ հաստատութեան կամ անձի կտակած է, պարտական է կտակընկալ հաստատութիւնը նոյն կէսը վճարել ըստ պայմանաց կտակին. որուն մէջ յայտնի գրուած պիտի ըլլայ թէ անձի մը եղած կտակը նոյն անձին մահուամբը պիտի վերջանայ, թէ ժառանգորդաց ալ պիտի վճարուի։

10. Մէկը տուն կամ այլ անշարժ ստացուածք կտակելով ազգային հաստատութեան մը, անոնց մէջ կրնայ բնակիլ կամ անոնց վարձքն առնուլ. և կտակընկալ հաստատութիւնը բնաւ որ և է միջամտութիւն պիտի չընէ, մինչեւ ցմահ կտակարարին. և ապա ըստ կտակին պիտի վարուի։

11. Ազգային Վարչութիւնը պարտական է որ և է անձն, թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական, որ զուրիշը կը յորդորէ կտակ ընելու բարեբարութեանը, զնա ըստ արժանւոյն վարձատրել տալ կտակընկալ հաստատութեան՝ միանգամ ընդ միշտ։

12. Կտակ յետ մահուն հաստատուն լինելով, կտակարար մը քանի որ կենդանի է, կարող է կտակը փոխել, աւելցընել կամ պակսեցնել. և կամ բոլորովին եղծել, եթէ այսպէս կանխաւ պայմանադրած է կտակագրին մէջ։

Հետեւաբար կտակարար մը որ իր կտակը փոխել կամ եղծել կ'ուզէ, պարտական է կտակընկալ հաստատութեան հատուցանել եղած բոլոր ծախքերը, որ մինչև կտակին փոխուելու կամ եղծելու օրը եղած են։ Այս ծախուց մէջ են ֆէրազի, ինթիքալի, վարձատրութեան, երթեւեկութեան, արձանագրութեան և այլ ամենայն ծախք, որ նոյն կտակին առթիւ տեղի ունեցած են։

Բոլորովին եղծելու միջոցին 10 առ 0/0 կտակընկալ հաստատութեան հատուցանելու պարտական է։

Եւ եթէ կտակարար մը կտակընկալ հաստատութենէն որ և է գումար մը առած է ըստ պայմանի կտակագրին

իւրոյ, կտակը եղծած ժամանակ պարտական է նոյն գումարը օրինաւոր տոկոսովը վճարել։

13. Կտակարար մը որ ըստ պայմանի կտակագրին իւրոյ երբ իր կտակն եղծելու կամ փոխելու ինքնին տնօրէնութիւն ընէ՝ առանց Ազգային Վարչութեան հաւանութեանը, այդ տնօրինութիւնն անվաւեր և անընդունելի է։

Ըստ այսմ կտակարարի մը մահուընէն ետքը, եթէ անոր ստորագրութեամբը նոր տնօրէնութեան գիր մը երեւան գայ. կամ կտակն եղծելու կամ փոփոխելու մասին մէկ գրութիւնը տեսնուի, որուն վրայօք Ազգային Վարչութիւնը տեղեկութիւն չունի, անվաւեր և անընդունելի է։

14. Կտակարար մը եթէ դժբաղդութեան հանդիպի, կտակընկալ հաստատութեան կողմէն պէտք է որ խնամուի ըստ կարելւոյն, Ազգային Վարչութեան որոշմամբը։

15. Կտակարարի մը մահուընէն յետոյ, անոր կտակը ճշդիւ պիտի գործադրուի. և այս գործադրութեան մասին Ազգային Վարչութիւնը պարտական է ամէն տարի, որոշեալ ժամանակ, տեղեկութիւն հրատարակել, կամ եկեղեցւոյ մէջ ծանուցանել տալ ժողովրդեան։

16. Կտակագիր մը եթէ եղած կտակին ի՛նչ բանի համար գործածուելիքը չի պարունակէր, Ազգային Վարչութեան կը՞վերաբերի այդ տնօրէնութիւնը. զոր լրա-

դրաց միջոցաւ եւս կը հրատարակէ, եթէ կտակարարին կամացը հակառակ չէ։

17. Եթէ դրամական կտակի մը համար կտակարարը տնօրէնութիւն մը չէ ըրած, Ազգային Վարչութիւնը ըստ առաջարկութեան կտակընկալ հաստատութեան կը տընօրինէ, կամ անշարժ ստացուածք մը գնել, կամ դրամը հաստատուն Դրամատան (պանքայ) մը յանձնել, և այլն։

18. Կտակի մը գործադրութեան մասին որ և է զանցառութիւն աններելի է. և բաց 'ի կտակակատարէն՝ եթէ կարգեալ է, ամեն հայ իբրեւ կտակակատար՝ իրաւունք ունի բողոքելու առ որ անկ է, և կտակին ճշդիւ գործադրութիւնը պահանջելու։

19. Եթէ կտակի մը գործադրութեան մէջ որ և է դժուարութիւնք երեւան գան, Ազգային Վարչութիւնը պիտի քննէ, և հրատարակութեամբ պիտի ծանուցանէ այն դժուարութիւնները. որպէս զի որ և է փոփոխութիւն կարելի ըլլայ արդարանալ հասարակաց դատաստանին և խղճին առջեւ իսկ։

20. Ճշդիւ պիտի գործադրուի նաեւ այն կտակագիրը. որ իր մէջ ազգային հաստատութեան վերաբերեալ կտակէ զատ, ընտանեաց կամ այս ու այն անձի և տեղւոյ սեփական կտակ կը պարունակէ. որ և կանխաւ վերացեալ է Ազգային Վարչութենէն։

21. Ամեն եկեղեցի տարւոյն մէջ յատուկ օր մը պիտի ունենայ, յորում նոյն եկեղեցւոյ քարոզիչը և կամ

քարոզիչ չեղած ատենը՝ Աւագերէցը Ս. Պատարագ պիտի մատուցանէ, և նոյն եկեղեցւոյ և անոր շրջանակին մէջ գտնուող ազգային հաստատութեանց և այլոց եղած բոլոր կտակները և կտակարարները յականէ յանուանէ պիտի յիշատակէ օրհնութեամբ, և հանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի։

Բոլոր կտակընկալք պարտական են մասնակցիլ այն հանդիսաւոր արարողութեան ծախուց, և բաժին հանել եկեղեցական դասուն և այլ պաշտօնէից։

Այս ընդհանուր յիշատակութեան մէջ պիտի գրտնուին նաեւ անխտիր այն կտակները. որոնք տարւոյն մէջ իրենց սահմանեալ յատուկ յիշատակութեան օր ունին ըստ կամաց կտակարարի։

22. Ամեն եկեղեցւոյ Խորհրդարանին մէջ, կամ ուրիշ յարմար տեղ մը, նոյն եկեղեցւոյ և անոր շրջանակին մէջ գտնուող ազգային հաստատութեանց և այլոց եղած կտակներուն բնագիր օրինակները, կամ անոնց համառօտ պարունակութիւնը և կտակարար բարերարաց անուններն ընդհանուր ցանկի վրայ առած ի տես պիտի դրուին ժողովրդեան։

Կտակարար մը եթէ չի կամի իր կտակագիրն ի տես ժողովրդեան դնել, ըստ այնմ պիտի գործադրուի, քանի որ ինք կենդանի է. և յետ մահուան դարձեալ ի տես պիտի դրուի։

ՀԱՅԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

14381

1873

Գին 2 գուրուշ

Ամսագրատոմարներ Կեդր. մեծաս կին

2013